



Երկուշաբթի, Ապրիլ 20, 2020

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն գրարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա զիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:


ՍԱՂՄՈՍ 145

ՆԵՐՔՈՂ ԱՍՏՈՒԾՈՅ

Պիտի փառաբանեմ քեզ, իմ Թագաւոր Աստուածս,
քո անունդ պիտի օրհնաբանեմ յաւիտեան՝ յաւիտեան:
Մեծ է Տէրը, եւ ամէն օրհներգութեան արժանի.
անչափելի է անոր մեծութիւնը:
Բոլոր սերունդները պիտի գովաբանեն ըրածներդ, Տէր,
պիտի պատմեն հզօր գործերդ:
Բարեգութ եւ ողորմած է Տէրը, համբերաբար եւ սիրով լեցուն:
Բոլորին հանդէպ բարեհաճ է Տէրը,
իր գթութիւնը կը փարածէ իր բոլոր արարածներուն վրայ:
Թագաւորութիւնդ բոլոր ժամանակներուն համար է,
եւ փերութիւնդ՝ բոլոր սերունդներուն համար:
Տէրը հաւաքարիմ է իր բոլոր խոստումներուն մէջ,
արդար է իր վարմունքին մէջ,
նախանձախնդիր է իր բոլոր գործերուն մէջ:
Տէրը նեցուկ կը կանգնի անոնց՝ որոնք իյնալու վրայ են,
եւ ոտքի կը կանգնէ բոլոր գլորածները:
Բոլորին աչքերը քեզի յառած են,
եւ դուն իւրաքանչիւրին ուրեւիքը կու փաս իր արեւին:
Տէրը մօտիկ է անոնց՝ որոնք իրեն կ'աղօթեն,
բոլոր անոնց՝ որոնք իրեն կ'աղօթեն անկեղծութեամբ:
Անիկա իրմէ ակնածողներուն փափաքը կը կատարէ,
անոնց աղօթքը կը լսէ եւ կը փրկէ զանոնք:
Տէրը կը պահէ բոլոր զինք սիրողները,
մինչ կորուստի կը մտնէ բոլոր ամբարիշտները:
Ես օրհներգութիւն պիտի ընծայեմ Տիրոջ,
եւ թող ամէն արարած օրհնաբանէ՛ անոր սուրբ անունը
յաւիտեան՝ յաւիտեան: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վմենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղեցոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԲԹԸ

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄ ԵՐԵՄԻԱՅԻ
34 ԳԼՈՒԽ

ՊԱՏԳԱՄ ՄԸ ՍԵՂԵԿԻԱՅԻՆ (34:1-7)

Ահա պահը կու գայ, երբ Տէրը Երեմիա մարգարէին ճամբով իր պարգամը կը փոխանցէ Սեղեկիա թագաւորին, թէ ինչ կը սպասուի իրեն համար: Այո, գերի կը փարուի Բաբելոն, բայց Տէրը սկիզբէն կ'ըսէ թէ անհկա սուրով պիտի չմեռնի ինչպէս իր փոխները իր աչքին առջեւ սուրով կը սպաննուին, իր աչքերը կը կուրցնեն, բայց Տէրը կ'ըսէ որ ան խաղաղ մահ պիտի ունենայ, այսինքն՝ ոչ սպաննութեամբ, հակառակ Սեղեկիայի չարութեան, որ մի գուցէ առիթ ըլլայ ապաշխարութեան: Տէրը սկիզբէն այս պատգամները կը փոխանցէ, նախքան անոնց կատարուիլը, որպէսզի երբ կատարուին, անոնք հաւատան: Այլապէս, ինչ օգուտ ունի, կատարուելէն յետոյ ըսելը: Քրիստոս նոյնպէս Իր առաքեալներուն պիտի ըսէր. «Ձեզի սկիզբէն ըսի, որպէսզի երբ կատարուին դուք հաւատաք ըսածներուս»:

ԳԵՐԻՆԵՐՈՒ ՀԱՆԴԷՊ ԽԱԲԵՊԱՏԻՐ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ (34:8-22)

8-22 հմր ցոյց կու փան թէ ինչպէս Իսրայէլի իշխաններն ու բոլոր ժողովուրդը կեղծ ուխտ կը կնքեն: Սկիզբը կը հնազանդին այն պարտիրանին, որ Աստուած Իրենց փրկած էր երբ Եգիպտոսէն՝ ծառայութեան փրկէն հանած ժամանակ թէ ինչպէս ծառայ մը 6 փարի ծառայելէ յետոյ, 7-րդ փարին ազատ պէտք է արձակուի: Այս ուխտին համաձայն նաեւ Սեղեկիա թագաւորը Երուսաղէմի մէջ եղող բոլոր ժողովուրդին հետ այս ուխտը ըրաւ, ու անոնք հնազանդեցան, բայց անոնք դարձան ու իրենց ազատ արձակած ծառաներն ու աղախինները բռնադատեցին (8-11 հմր): Տէրը կը յիշեցնէ այդ ուխտը, եւ այդ ուխտին նկատմամբ անոնց կեղծաւորութիւնը (12-16 հմր): Ահա այս կեղծաւորութեան համար Տէրը զիրենք կտորրածի պիտի մարտն (17-22 հմր): Այս հատուածը ցոյց կու փայ Յուդայի թագաւորին ու անոր իշխաններուն մեղքը, որ այս պարագային կռապաշարութիւնը չէ, այլ Աստուծոյ պարտիրանին զանցառութիւնը, ու այդ պարտիրանին նկատմամբ անոնց կեղծաւորութիւնը:

**Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հոշանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ քազմամեղիս:**